

Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊՍ. ՊՈՂԱՊԱԼՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ
(Հուլիսի 2-ին)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ» ամէն:

«Քրիստոս Աստուած մեր, շնորհեա մեզ ընդ Պետրոսի և ընդ որդւոց Զեբեթեայ, արժանաւորիլ քում աստուածային տեսլեանդ» (շարակնոց):

Սրբազան շարականագիրը Վարդավառի տոնի առթիվ այսպիսի տողերով է նկարագրում իր ներքին ցանկությունը և իղձը՝ արժանի դառնալու Քրիստոսի Պայծառակերպության տեսիլքին, ասելով. «Քրիստոս Աստված մեր, Պետրոսի և Զեբեթյան որդիների նման մեզ ևս արժանացրու աստվածային տեսիլքիդ»:

Սիրելի հավատացյալներ, այսօր Վարդավառ է, մեր հին հայկական հեթանոսական տոնը: Այդ տոնի առթիվ հեթանոս մեր նախահայրերը հավաքվում էին՝ տոնախմբելու համար Նոր տարվա՝ Նավասարդի մեկի հիշատակը Աշտիշատում, Իննակնյան կոչվող շրջանում /և այնտեղ, այդ Նոր տարվա տոնախմբության օրը, վարդ և ծաղիկ էին նետում իրար վրա, աղավնիներ և տատրակներ արձակում երկինք, աղբյուրներից զուլալ, զովացնող ջուր էին շաղ տալիս իրար վրա ու մաղթում, որ հայոց Նոր տարին՝ Նավասարդի մեկը, լիներ երջանիկ սկիզբ մի նոր տարվա: Մեր հեթանոս հայրերը Իննակնյան սրբարաններում հայկական աստվածների հույլին զոհեր էին մատուցում, մատաղ անում, ձիարշավներով և զանազան խմբական պարերով հիշատակում գալուստը Նոր տարվա:

Այդ օրերը պատմություն դարձան և գընացին: Սակայն մեր իմաստուն Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Հայրապետը եկավ այդ հեթանոսական տոներին մի նոր՝ քրիստոնեական իմաստ տալու, մի իմաստ, որով հեթանոսական տոնը վերափոխվում էր պայծառակերպության, Հիսուսի այլակերպության տոնին: Այդպես է, որ հին ժամանակներում, մինչև 551 թվականը մենք Վարդավառի տոնը կատարել ենք օգոստոսի 11-ին: Սակայն Մովսես Բ Եղիվարդեցի Կաթողիկոսի օրվանից, երբ նա հայկական մեր տոմարը վերակազմեց, Վարդավառի տոնը բաժանվեց Աստվածածնի տոնից, որովհետև Աստվածածնի տոնը ևս օգոստոսի 15-ին էր կատարվում, սկսած վաղ ժամանակներից՝ լինելով անշարժ մի տոն: Մովսես Կաթողիկոսը Այլակերպության կամ Վարդավառի տոնը կապեց Զատկի տոնախմբության հետ, և այժմ այն կատարվում է Զատկից 14 կիրակի հետո, այսինքն՝ Հոգեգալստից 7 կիրակի անց: Վարդավառը առնչված է Զատկի հետ 35 օրերի տեղափոխությամբ և տոնվում է՝ Զատկի հետ ետ ու առաջ շարժվելով:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ, ի՞նչ է քրիստոնեական իմաստը Վարդավառի տոնի: Ինչպես քիչ առաջ նշեցի, Այլակերպության կամ Պայծառակերպության տոնն է այդ: Քրիստոս՝ Աստվածորդին, մարմնացավ, մարդկային կերպարանք ստացավ, եկավ աշխարհ և երեսուն տարիքը լրանալուց հետո երեք տարի շարունակ քարոզեց իր ժողովրդի ծոցում, բժշկեց նրանց առակներով և զանազան օրինակներով ցույց տվեց Աստծո սերը մարդկության հանդեպ, օգնության ձեռք երկարեց բոլոր տկարներին, հիվանդներին, նույնիսկ մեռելներին, հարություն տվեց՝ նոր կյանք ու կենդանություն պարգևելով նրանց: Նրա ամբողջ կյանքը զոհողության մի կյանք եղավ. նա տվեց ինքն իրեն սպանվելու աստիճան և խաչի վրա իր անմեղ ու թանկ արյունը թափեց մարդկության մեղքերի քավության համար՝ այդպիսով դառնալով միջոց ու

պատարագ փրկագործության, որպեսզի մենք իր զոհողությամբ փրկվենք և իր հարությամբ հավիտենական կյանքը կարողանանք ժառանգել: Հիսուս իր քարոզության վերջին տարում իր աշակերտներից Պետրոսի, Հակոբոսի և Հովհաննեսի հետ բարձրացավ Թաբոր լեռը: Այնտեղ, երբ աշակերտները խոսքով էին տարվել, հանկարծ Հիսուսի դեմքը արեգակից ավելի պայծառացավ: Ինչպես Ավետարանն է ասում, նրա զգեստները այնքան էին փայլում մաքրությամբ, որ աշխարհի վրա ոչ մեկ լվացարար չէր կարող այդպես սպիտակեցնել շորերը: Պայծառակերպության այդ պահին աշակերտները ապշած էին ու զարմացած, մանավանդ երբ նրանք նկատեցին Մովսեսին ու Եղիային՝ Հիսուսի աջ ու ձախ կողմերում կանգնած: Պետրոսը, տեսիլքից այլայլված, սկսեց խոսել և գլուխը բարձրացնելով գետնից՝ ասաց. «Վարդապետ, լավ է, որ մենք այստեղ երեք վրան դնենք, մեկը քեզ, մյուսը՝ Մովսեսի և երրորդը՝ Եղիայի համար»: Քիչ հետո սպիտակ մի ամպ եկավ և Հիսուսին ծածկեց աշակերտների աչքից: Ամպի միջից Սուրբ Հոգին հետևյալն ասաց. «Սա՛ է իմ Որդին, լսեցե՛ք նրան»: Ի՜նչ հոյակապ տեսիլք. այդ տեսիլքի միջոցով Աստված ինքն իրեն էր բացահայտում մարդկությանը: Այստեղ մարդկությունը ներկայացնում էին Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը, որոնք իսկապես ականատես վկաները եղան Թաբոր լեռան բարձունքին իրենց Վարդապետի պայծառակերպության: Այդ վարդապետը ճշմարտապես Աստված էր՝ աշխարհ իջած, և նրանք վկաները հանդիսացան նրա աստվածային փառքի՝ տեսնելով նրան հայրական իր փառքի մեջ:

Սիրելի հավատացյալներ, մեր կյանքում կան պահեր հուսահատության, պահեր փորձության, պահեր աղետի ու չարիքի և պահեր լավատեսության և բարեգործության: Ո՞ր պահն ենք մենք ընտրելու մեր կյանքում և հետևելու նրան: Չար, սատանայական պահերից մեկը եղավ սոսկալի աղետը, որ պատեց մեր ժողովրդի գլխին անցյալ դեկտեմբերի 7-ին: 40 վայրկյանում հյուսիսային Հայաստանը քարուքանդ եղավ, տասնյակ հազարավոր կյանքեր խլվեցին, բազմաթիվ քաղաքներ ու գյուղեր կործանվեցին: Եթե այդ 40 վայրկյանը չըգար, մենք այսօր կորցրած պիտի չլինեինք մեր տներն ու շենները, մեր որդիներին և մենք սովորական մեր կյանքը պիտի շարունակեինք խաղաղ ու երջանիկ: Նշանակում է պահը իր իմաստն ունի մեր կյանքում. կան չարիքի պահեր և կան բարիքի՝ մարդասիրության, զոհողության ու սիրո պահեր: Չարիքի պահերը իբրև պատուհաս հանկարծ հասնում են մարդկանց վրա, մարդիկ իրենք իրենց են սպանում, երբեմն նաև իրենց հարազատներին և ուրիշներին: Այդ պահին վատը կուտակվում է և ներգործում մարդու մեջ: Բայց այն պահը, որ մեզ ցույց տվեց Քրիստոս իր պայծառակերպությամբ, սիրո, զոհողության, մարդասիրության, արտակցության պահն էր: Այսօր մենք, իբրև ժողովուրդ և անհատներ, կարիքն ունենք աշխարհում և դրսում տարածել երջանկություն և մարդասիրություն: Հոգևոր երջանկության պահերից ամենակարևորը մեր Տիրոջ՝ Հիսուսի Պայծառակերպության պահն է այսօր ձեզ ևս հայտնվող: Սրբազան շարականագիրը, որից քիչ առաջ մեջբերում կատարեցի, շարունակում է իր խոսքերը և ասում. «Տե՛ր, մեզ շնորհիր այդ երջանիկ պահը, որ կարողանանք մեր մարմինները մաքրել և պատրաստել քեզ համար, որպեսզի դու բնակվես մեր մեջ»: Ի՜նչ հրաշալի զգացողություն, ի՜նչ ներքին ծարավ Աստուծո հետ հաղորդվելու, աստվածայինը նաև երկրավոր դարձնելու և այդպիսով մարդկության մեջ սեր ու արդարություն տարածելու:

Սիրելի հավատացյալ քույրեր և եղբայրներ, այսօր, Պայծառակերպության տոնի առթիվ, իբրև պատասխան մեր աղոթքների, Հիսուս վերստին երևում է իր փառքով մեզ մեր հոգևոր կյանքում: Այն մաքուր ու զուլալ աղբյուրի ջուրը, որ ճանապարհներին մեր վրա շաղ է տրվելու, թող երկնառաք օրհնություն լինի, սրբի ու մաքրի մեզ և պայծառափոխի մեր կյանքը: Ջուրը բարիք է, կյանք է և առատություն: Թող այսօր պայծառակերպված մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, նորոգ կյանք պարգևի մեզ բոլորիս: Թող Վարդավառի տոնը պայծառակերպի հին մարդուն մեր մեջ, ցույց տա մեզ նոր կյանքով, նոր տեսիլքով ապրելու ճանապարհը: Մեր դժվարությունց, հուսահատության պահին չտկարանանք, այլ միշտ վերև նայենք, դեպի Գողգոթայի բարձունքը, ուր խաչվեց մեր Տերը, բայց չմեռավ, այլ նոր կյանք պարգևեց մարդկությանը:

Թող Տիրոջ ողորմությունը և սերը մեզ հետ լինեն այժմ և հավիտյանս հավիտենից. ամեն: